ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Շիրակի մարզում 2025 թվականի ընթացքում գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության ոլորտներում կատարված աշխատանքների վերաբերյալ

Գյուղատնտեսություն.

ՀՀ Շիրակի մարզում 2024-2025 թվականների բերքի տակ կատարված հիմնական մշակաբույսերի ցանքային տարածությունները հետևյալն են՝

Հ/Հ	Մշակաբույսի անվանումը	Ցանքատարածությունը (հա)		
		2024թ.	2025թ.	Տարբերությունը (+/-)
1	**Աշնանացանհացահատիկ**	13160	11144	-2016
2	**Գարնանացան հացահատիկ**	20344	22837	+2493
3	**Հատիկաընդեղեն**	161	141	-20
4	**Տեխնիկական**	141	91	-50
5	**Կարտոֆիլ**	3863	3503	-360
6	**Բանջարեղեն**	1083	975	-108
7	**Կերային**	8568	8574	+6

2026 թվականի բերքի տակ կատարվել է **19356.5** հա աշնանացան ցորենի ցանք:

ՀՀ կառավարություն 2025 թվականի մարտի 27-ի N 356-Լ որոշմամբ հաստատված Բուսաբուծության աջակցության ծրագրի շրջանակներում 3021 շահառուի հետ կնքվել է 13026.5 հա աշնանացան ցորենի ցանքատարածության պայմանագիր:

Հ/Հ	Համայնքը	Շահառուների թիվը	Ցանքատարածությունը /հա/
1	**Ախուրյան**	1000	4279.01
2	**Արթիկ**	975	3098.54
3	**Անի**	693	3374.3
4	**Ամասիա**	215	1894.69
5	**Աշոցք**	138	379.96

2025 թվականին՝ համեմատած 2024 թվականի հետ, գյուղատնտեսական հիմնական մշակաբույսերի միջին բերքատվությունը հետևյալն է՝

Հ/Հ	Մշակաբույսիանվանումը	Միջինբերք /գ/	
		2024թ.	**2025թ.**
1.	Հացահատիկ և հատիկաընդեղեն *որից՝*	19.0	26.94
1.1	*աշնանացան ցորեն*	21.4	32.29
1.2	*գարնանացան գարի*	17.0	24.6
1.3	*հատիկաընդեղեն*	14.3	19.5
2.	Կարտոֆիլ	187.6	211.36
3.	Բանջարեղեն	201.1	204.15

ՀՀ կառավարություն 2025 թվականի մարտի 27-ի N 356-Լ որոշմամբ հաստատված Բուսաբուծության աջակցության ծրագրի արդյունքները հետևյալն են՝

Հ/Հ	Համայնքը	Կատարված ցանքը /հա/	Շահառուների թիվը	Փոխհատուցված գումարը /մլն դրամ/
1	Ախուրյան	2871.9897	625	209.81552
2	Արթիկ	1590.452	491	112.02416
3	Անի	2596.7661415	407	184.163275
4	Ամասիա	1831.910748	277	132.62401
5	Աշոցք	647.435214	187	46.584645
Ընդամենը		**9538.553804**	**1987**	**685.21161**

ՀՀ կառավարության 2025 թվականի մարտի 27-ի N 356-Լ որոշմամբ հաստատված բուսաբուծության աջակցության 2025 թվականի ծրագրի 22-րդ կետով սահմանված ՀՀ Շիրակի մարզպետի համապատասխան որոշմամբ ստեղծված աշխատանքային խմբի կողմից 420 շահառուի 1402.34 հա ցանքատարածություններում իրականացվել է ընտրանքային մոնիթորինգ։

Հ/Հ	Համայնքը	Շահառուների թիվը	Ցանքատարածությունը /հա/
1	**Ախուրյան**	132	178.12
2	**Արթիկ**	103	291.89
3	**Անի**	82	478.85
4	**Ամասիա**	63	328.02
5	**Աշոցք**	40	125.46

ՀՀ կառավարության 2025 թվականի հոկտեմբերի 9-ի N 1441-Լ որոշմամբ հաստատված 2024 և 2025 թվականներին Հայաստանի Հանրապետության Արագածոտնի, Արարատի, Արմավիրի, Գեղարքունիքի, Լոռու, Շիրակի, Տավուշի և Սյունիքի մարզերում տեղացած կարկուտի հետևանքով հողօգտագործողներին պատճառված վնասների մասնակի փոխհատուցման տրամադրման կարգի համաձայն ՀՀ Շիրակի մարզի 1546 շահառուի 4703.92 հա-ի դիմաց տրամադրվել է 264437000 դրամ փոխհատուցում։

Հ/Հ	Համայնքը	Վնասված տարածքը /հա/	Փոխհատուցված գումարը /դրամ/	Շահառուների թիվը
1	**Ախուրյան**	3524.321473	220141288	1121
2	**Արթիկ**	122.71851	3726661	97
3	**Անի**	945.5402	37143202	295
4	**Ամասիա**	111.34	3425956	33

2025 թվականին 15283 հա-ի վրա մկնանման կրծողների դեմ քիմիական պայքարի միջոցառումներ իրականացնելու նպատակով մարզին անհատույց տրամադրվել է 1222.64 լիտր թունանյութ:

2025 թվականի ընթացքում ՀՀ Շիրակի մարզում գյուղատնտեսության ոլորտում իրականացվել են նաև պետական աջակցության հետևյալ ծրագրերից՝

1) **Գյուղատնտեսական հումքի մթերումների (գնումների) նպատակով տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագիր**

Ծրագրի շրջանակում 2025 թվականի դեկտեմբերի 1-ի դրությամբ Շիրակի մարզի շահառուների կողմից ներգրավվել է 3 վարկ՝ 115.0 մլն դրամի չափով, որոնց սուբսիդավորման գումարը կազմել է շուրջ 2.7 մլն դրամ: Տրամադրված վարկերի շրջանակներում կնքվել են հումքի մթերման 68 պայմանագրեր:

2) **Հայաստանի Հանրապետությունում ագրոպարենային ոլորտի սարքավորումների լիզինգի աջակցության ծրագիր**

Ծրագրի շրջանակում 2025 թվականի դեկտեմբերի 1-ի դրությամբ հաստատվել է Շիրակի մարզի շահառուների 5 հայտ՝ շուրջ 32.5 մլն դրամի չափով, որոնց սուբսիդավորման գումարը կազմել է շուրջ 3.5 մլն դրամ (3.1 մլն դրամը շարժական մոդուլային սպանդանոցի կանխավճարի սուբսիդավորման գումարն է):

3) **ՀՀ կառավարության 2024 թվականի օգոստոսի 22-ի N 1392-Լ որոշմամբ հաստատված՝**

- «Մթերատվության բարձրացման փորձնական» ծրագրի շրջանակում 2025 թվականին մարզի 5 համայնքներում իրականացվել է 2055 կովի արհեստական սերմնավորման միջոցառում,

Հ/Հ	Համայնքը	Գլխաքանակը /գլուխ/
1	Ախուրյան	960
2	Արթիկ	397
3	Անի	384
4	Ամասիա	127
5	Աշոցք	187

- «Մեղվաբուծության զարգացման փորձնական» ծրագրի շրջանակում 2025 թվականին մարզի 8 տնտեսավարողների կողմից ձեռք է բերվել 114 մեղվափեթակ (մեղվաընտանիքներով) և փոխհատուցվել է 4.56 մլն դրամ գումար,
- «Ոչխարաբուծության և այծաբուծության զարգացման 2024-2028 թվականների» ծրագրի շրջանակում 1 տնտեսավարողի կողմից ձեռք է բերվել 30 գլուխ տոհմային մանր եղջերավոր կենդանիներ:

4) **ՀՀ-ում գյուղատնտեսական տեխնիկայի լիզինգի աջակցության ծրագիր**

Ծրագրի շրջանակում Շիրակի մարզում 2025 թվականի դեկտեմբերի 1-ի դրությամբ ձեռք է բերվել 132 միավոր գյուղատնտեսական տեխնիկա, այդ թվում՝ 41 միավոր տրակտոր: Լիզինգի գումարը կազմել է շուրջ 692 մլն դրամ:

5) **Հայաստանի Հանրապետությունում ինտենսիվ այգեգործության զարգացման, արդիական տեխնոլոգիաների ներդրման և ոչ ավանդական բարձրարժեք**

մշակաբույսերի արտադրության խթանման պետական աջակցության 2021-2025 թվականների» ծրագիր

Ծրագրի շրջանակում կարկտապաշտպան ցանցերի ներդրման բաղադրիչով կնքվել է 1 պայմանագիր 0.9 հա ընդհանուր մակերեսով այգիներում կարկտապաշտպան ցանցեր ներդնելու նպատակով:

Շրջակա միջավայրի պահպանություն.

2025թ. ընթացքում Շիրակի մարզպետի աշխատակազմի նախաձեռնությամբ և «Էյ Թի Փի» բարեգործական հիմնադրամի աջակցությամբ կանաչ տարածքների հիմնման աշխատանքներ են իրականացվել Աշոցք, Անի, Ամասիա, Ախուրյան և Արթիկ համայնքների բնակավայրերում, որոնց ընդհանուր մակերեսը կազմում է մոտ 6 հա:

2025թ. ընթացքում շարունակվել է նաև Մեծ Սարիար բնակավայրում՝ 30 հա անտառների հիմնման աշխատանքները: Անտառների հիմնման աշխատանքներ են իրականացվել նաև «Հայանտառ» ՊՈԱԿ-ի «Գյումրու անտառտնտեսության» կողմից 13 հա ընդհանուր մակերեսով:

Մարզպետի աշխատակազմի նախաձեռնությամբ 2025թ. ընթացքում կանաչապատման և դիզայներական ձևավորման աշխատանքներ են իրականացվել մարզի 34 դպրոցների, մանկապարտեզների և 15 այլ ուսումնական հաստատությունների տարածքներում:

Մարզպետի աշխատակազմի աջակցությամբ Շեն բարեգործական հիմնադրամի կողմից մեկնարկել է նաև Արթիկ համայնքի Մեծ Մանթաշ բնակավայրի վարչական տարածքում 22 հա էկոանտառի հիմնման աշխատանքները:

Հաշվետու ժամանակահատվածում մարզում հանքարդյունահանման բնագավառում իրականացվող 20 ՇՄԱԳ նախագծերի վերաբերյալ կազմակերպվել են քննարկումներ՝ մարզպետի աշխատակազմի և համայանքապետարանների համապատասխան մասնագետների հետ:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ

ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ՝

ՌՈՄԱՆ ՀԱՄԱՅԱԿՅԱՆ